688

1. Այս խոսքս հիշի՛ր, հիշի՛ր միալար,
Որ դու մեռնում ես ապրելու համար:
Հիշի՛ր՝ ով էիր դու այս աշխարհում,
Հիշի՛ր՝ հին մարդը քեզ ուր էր տանում:
Հիշի՛ր՝ խաչն էիր հանում Հիսուսին,
Մահվան սև լուծն էր դրված քո ուսին:
Որ փուչ մեկն էիր՝ քեզանով գերված,
Ավեր տուն էիր՝ հիմքդ խարխլված:
Դու ապրում էիր մեղքով միալար,
Եվ այս ամենը՝ մեռնելու համար:

2. Բայց եղավ մեկ օր, որ լույս ստացար,
Տիրոջից շնորհք ու հույս ստացար,
Լուսավորվելով՝ քեզ ճանաչեցիր,
Ապրածիդ համար խիստ ամաչեցիր:
Ատեցիր կյանքը՝ խղճուկ, վաղանցիկ,
Անոթդ սրբվեց, դարձավ թափանցիկ,
Ու Տերն երևաց այնտեղ Իր լույսով,
Քեզ մխիթարեց ու արեց հույսով,
Որ դու Իր ձեռքով կյանք պիտ ստանաս,
Եթե Իր խոսքի, սիրո մեջ մնաս:

3. Եվ Նա խոստացավ քեզ Իր մոտ տանել,
Հզոր բազուկով Իր գահին հանել:
Կտեսնես այնտեղ սուրբ եղբայրներին,
Կտեսնես այնտեղ հրեշտակներին,
Կտեսնես այնտեղ Տիրոջդ փառաց՝
Սիրո կանթեղը Իր ձեռքում վառած:
Կտեսնես նաև Փրկչիդ վերքերը,
Որ պիտի պատմեն Հիսուսիդ սերը:
Եվ արժե մեռնել այդ սիրո համար,
Բայց մենք մեռնում ենք ապրելու համար: